# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՄԱՐՏ 2021 թվականի N 72-Ա

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Երևանյան խճուղու հյուսիսային մասում գտնվող, 06-002-0006-0016 ծածկագրից առանձնացվող, 0.02353 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի, N 57/2 փոստային հասցե:
2. Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի Թբիլիսյան խճուղու հյուսիսային մասում գտնվող, 06-060-0203-0012-0013 ծածկագրերից առանձնացվող, 0.09306 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, Թբիլիսյան խճուղի, փողոց 28, N 15/5 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. մարտի 01
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՄԱՐՏ 2021 թվականի N 73-Ա

### ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 15.07.2013Թ. N 169-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդու քաղաքապետի 15.07.2013թ. «Վարձակալ ճանաչելու վերաբերյալ» N 169-Ա որոշման մեջ «9» թվի փոխարեն կարդալ «19» թիվը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. մարտի 02

ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՄԱՐՏ 2021 թվականի N 74-Ն

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 25-ի N 8-Ն որոշումը ***որոշում եմ՝***

1. Հաստատել Ալավերդի համայնքի 2021 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը /հավելված 1, 2/:
2. Հաստատել Ալավերդի համայնքի 2021 թվականի բյուջեի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների /հավելված 1, 4/:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. մարտի 02
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՄԱՐՏ 2021 թվականի N 75-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28.09.2020Թ. N 309-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ, 34-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը և տնտեսական սենյակը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից տրված 15.09.2020թ. տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասի N 2 շենքի արևելյան մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 55.0 քմ արտաքին մակերեսով (48.5 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության ավտոտնակի և 55.0 քմ արտաքին մակերեսով (50.4 քմ ներքին մակերեսով) տնտեսական սենյակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասի N 2 շենքի արևելյան մասում գտնվող, 1985թ. ինքնակամ կառուցված, 55.0 քմ արտաքին մակերեսով (48.5 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության ավտոտնակը և 2020թ. ինքնակամ կառուցված, 55.0 քմ արտաքին մակերեսով (50.4 քմ ներքին

մակերեսով) բնակելի նշանակության տնտեսական սենյակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00551 հա մակերես ունեցող հողամասով:

3. Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասի N 2 շենքի արևելյան մասում գտնվող բնակելի նշանակության ավտոտնակին և տնտեսական սենյակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Դեբեդ թաղամաս, N 2-3/1 փոստային հասցե:
4. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Դեբեդ թաղամաս, N 2-3/1 հասեում գտնվող 0.00551 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 3-րդ կետի համարել փոփոխված՝ որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության:
5. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո այն ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
6. Բնակելի նշանակության ավտոտնակի և տնտեսական սենյակի զբաղեցրած 0.00551 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
7. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ավտոտնակի և տնտեսական սենյակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
8. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Գագիկ Սարգսի Մխիթարյանին, օրինականացված ավտոտնակը, տնտեսական սենյակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:
9. Ուժը կորցրած համարել Ալավերդի համայնքի ղեկավարի 28.09.2020թ. «Ինքնակամ կառուցված բնակելի գործառնական նշանակության ավտոտնակի և տնտեսական սենյակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու, օրինականացնելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 309-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. մարտի 02
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՄԱՐՏ 2021 թվականի N 76-Ա

### ՀԱՄԱՅՆՔ ԱԼԱՎԵՐԴԻ, ՔԱՂԱՔ ԱԼԱՎԵՐԴԻ, ՍԱՆԱՀԻՆ ԿԱՅԱՐԱՆ ԹԱՂԱՄԱՍ, N 18/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԸ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՆ ՈՒ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 01.02 2021Թ. N 24-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 25-րդ, 26-րդ, 31-րդ, 32-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված շինությունները՝ բնակարանը, բաց պատշգամբն ու կատարված ձևափոխությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Վլադիմիր Լևոնի Իսոյանի դիմումը, անձնագրերի պատճենները, սեփականության իրավունքի N 29012021-06-0023 վկայականը, «Սարգիս Թամազյան Ռոբերտի» ԱՁ-ի կողմից կազմված շինությունների հատակագծերը, «ԹԻՎ 1 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված 29.01.2021թ. N 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Լուսյա Վլադիմիրի Իսոյանին, Վարդուհի Լևոնի Բեժանյանին, Մարգարիտ Լևոնի Իսոյանին, Վլադիմիր Լևոնի Իսոյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամասի N 18/2 հասցեում գտնվող բնակարանին կից՝ 2015թ. ինքնակամ կառուցված 21.53 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (19.74 ներքին մակերեսով) շինությունները ճանաչել օրինական:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 26-րդ կետի համաձայն նշված բնակարանում կատարված 7 հատ դռների և պատուհանների, 6 հատ միջնորմների ձևափոխությունները ճանաչել օրինական:

3. Կատարված շինարարական աշխատանքները Հայաստանի հանրապետության կառավարության 19.03.2015 թ. N 596-Ն որոշման համաձայն դասակարգվում են շինարարական ցածր ռիսկայնության աստիճանի (գտնվում են շինարարական աշխատանքների ռիսկայնության առաջին գոտում), ուստի միջնորմների փոփոխությունների արդյունքում կատարված ձևափոխությունները շինարարության թույլտվություն չեն պահանջում:
4. Օրինականացված 21.53 քմ արտաքին մակերեսով շինությունների զբաղեցրած հողամասի նկատմամբ կիրառվում է շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքով փոխանցելու վերաբերյալ նորմերը:
5. Օրինականացված բնակարանի, բաց պատշգամբի և ձևափոխված դռների, պատուհանների, միջնորմների համար սահմանված վճարներն ընդհանուր՝ 32816 (երեսուներկու հազար ութ հարյուր տասնվեց) դրամ գումարի չափով, սահմանված ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
6. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 01.02.2021թ. «Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին կայարան թաղամաս, N 18/2 հասցեում գտնվող բնակարանին կից ինքնակամ կառուցված բնակարանը, բաց պատշգամբն ու կատարված ձևափոխություններն օրինականացնելու մասին» N 24-Ա որոշումը:
7. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. մարտի 02
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՄԱՐՏ 2021 թվականի N 77-Ա

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21.01.2021Թ. N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի ղեկավարի 21.01.2021թ. «Սեփականության իրվունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը, անասնագոմն օրինականացնելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 13-Ա որոշման մեջ «0.05» թվերի փոխարեն կարդալ «0.053997» թվերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. մարտի 02
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՄԱՐՏ 2021 թվականի N 78-Ա

### ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՔԱՅԼԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 43-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 25.02.2021թ. N 19-Ն, N 20-Ն, N 21-Ն, N 22-Ն, N 23-Ն և N 24-Ն որոշումները, համայնքային սեփականության իրավունքի վկայականները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Թույլատրել բաց դասական աճուրդային եղանակով օտարելու համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Էվոյան փողոց, N 3/30 հասցեում գտնվող, 0.00421 հա մակերեսով հողամասը՝ 126300 դրամ մեկնարկային գնով:
2. Թույլատրել բաց դասական աճուրդային եղանակով օտարելու համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի, N 76/50-1 հասցեում գտնվող, 0.0096 հա մակերեսով հողամասը՝ 192000 դրամ մեկնարկային գնով:
3. Թույլատրել բաց դասական աճուրդային եղանակով օտարելու համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, 11-րդ փողոց, 12-րդ նրբանցք, N 8 հասցեում գտնվող, 0.405 հա մակերեսով հողամասը՝ 1417500 դրամ մեկնարկային գնով:
4. Թույլատրել բաց դասական աճուրդային եղանակով օտարելու համայնք Ալավերդի, Հաղպատ գյուղի տարածքում գտնվող, 0.07553 հա մակերեսով հողամասը՝ 264355 դրամ մեկնարկային գնով:
5. Թույլատրել բաց դասական աճուրդային եղանակով օտարելու համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, «Դաչա» կոչվող հանդամասում գտնվող, 0.1 հա մակերեսով հողամասը՝ 250000 դրամ մեկնարկային գնով:

6. Թույլատրել բաց դասական աճուրդային եղանակով օտարելու համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/5 շենքի հյուսիս-արևելյան մասում գտնվող, 0.04332 հա մակերեսով հողամասը՝ 108300 դրամ մեկնարկային գնով:
7. Սահմանել՝ աճուրդի մասնակցության վճար 15000 դրամ և քայլի չափ՝ մեկնարկային գնի 5 %-ի չափով:
8. Վերը նշված հողամասերի աճուրդային եղանակով օտարումը կազմակերպել սահմանված կարգով:
9. Բոլոր վճարումները կատարել ՀՀ արժույթով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. մարտի 03

ք. Ալավերդի

![coat of arms]

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՄԱՐՏ 2021 թվականի N 79-Ա

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ, հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Սպարտակ Ոսկանի Սիմոնյանի դիմումը, անձնագրերի պատճենները, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշմամբ ըստ կադաստրի տրամադրված բազայի քաղվածքը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Սպարտակ Ոսկանի Սիմոնյանին (ծնված 20.05.1964թ.), Սիրվարդ Ալբերտի Աբգարյանին (ծնված 20.12.1967թ.), Կարեն Սպարտակի Սիմոնյանին (ծնված 24.06.1988թ.), Նարեկ Սպարտակի Սիմոնյանին (ծնված 27.08.1990թ.), բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ ներքոհիշյալ գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը.

1.1 06-022-0218-0132 ծածկագրի տակ գտնվող 0.29518 հա 4-րդ կարգի վարելահողի նկատմամբ.

1.2 06-022-0233-0021 ծածկագրի տակ գտնվող 0.22119 հա 5-րդ կարգի վարելահողի նկատմամբ.

1.3 06-022-0248-0011-ծածկագրի տակ գտնվող 0.08086 հա 4-րդ կարգի վարելահողի նկատմամբ.

1.4 06-022-0222-0001-ծածկագրի տակ գտնվող 0.50463 հա 4-րդ կարգի խոտհարքի նկատմամբ:

2. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասերի հատակագծերով:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. մարտի 03

ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՄԱՐՏ 2021 թվականի N 80-Ա

### ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ՃԻՇՏ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓՈՎ ԵՎ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ, 10-րդ, 52-րդ, 53-րդ, 60-րդ և 66-րդ հոդվածներով, 101-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/06/2010թ. թիվ 186-Ն հրամանով, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ և հիմք ընդունելով Սեդա Հմայակի Շախկյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 11022021-06-0051 վկայականը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Լուծել Սեդա Հմայակի Շախկյանին վարձակալության իրավունքով պատկանող, Սանահին Սարահարթ 2/4 շենքի բակում գտնվող, 06-002-0150-0362 ծածկագրով, 0.00541 հա մակերեսով հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիրը:
2. Սեդա Հմայակի Շախկյանին սեփականության իրավունքով պատկանող, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ 2/4 շենքի բակում գտնվող ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/4-9/1 փոստային հասցե:

3. Հաստատել Սեդա Հմայակի Շախկյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի սպասարկման համար զբաղեցրած բնակելի կառուցապատման հողամասի գծային սահմանային չափերը և հողամասի 0.00515 հա մակերեսը՝ համաձայն որոշման հավելված հանդիսացող որակավորված անձի կողմից 16.02.2021թ. կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
4. Տալ համաձայնություն՝ Սեդա Հմայակի Շախկյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի սպասարկման համար զբաղեցրած հողամասի սահմանային չափերի և մակերեսի փոփոխությանը կադաստրային քարտեզում՝ համաձայն որակավորված անձի կողմից 16.02.2021թ. տրված հատակագծի:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված գլխավոր հատակագծով և որակավորված անձի կողմից տրված հողամասի հատակագծով:
6. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/4-9/1 hասցեում գտնվող, Սեդա Հմայակի Շախկյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի սպասարկման համար զբաղեցրած 51.5 քմ մակերեսով հողամասը՝ 27192 (քսանյոթ հազար հարյուր իննսուներկու) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել հողամասի վարձակալ Սեդա Հմայակի Շախկյանին:
7. Օտարվող հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
8. Որոշումն ուժի մեջ է մտնում հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:
9. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. մարտի 03
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՄԱՐՏ 2021 թվականի N 81-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից 10.02.2021թ. տրված թիվ 0-40 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 2/33 շենքի արևելյան մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 68.5 քմ արտաքին մակերեսով (61.9 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 2/33 շենքի արևելյան մասում գտնվող, 1992 թ. ինքնակամ կառուցված, 68.5 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00685 հա մակերեսով հողամասով:
3. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 2/33 շենքի արևելյան մասում գտնվող բնակելի նշանակության ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/33-46/1 փոստային հասցե:

4. Բնակելի նշանակության ավտոտնակի զբաղեցրած 0.00685 հա մակերեսով հողամաս ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Գագիկ Ժորայի Դավթյանին օրինականացված ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. մարտի 03
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՄԱՐՏ 2021 թվականի N 82-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲԾՏ» ՓԲ ընկերության կողմից 29.01.2021թ. տրված թիվ 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Էնգելս թաղամասի N 6 շենքի հյուսիս-արևմտյան մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 28.6 քմ արտաքին մակերեսով (24.2 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Էնգելս թաղամասի N 6 շենքի հյուսիս-արևմտյան մասում գտնվող, 1991թ. ինքնակամ կառուցված, 28.6 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00286 հա մակերեսով հողամասով:

3. Ալավերդի քաղաքի Էնգելս թաղամասի N 6 շենքի հյուսիս-արևմտյան մասում գտնվող բնակելի նշանակության ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Էնգելս թաղամաս, N 6-3/1 փոստային հասցե:
4. Բնակելի նշանակության ավտոտնակի զբաղեցրած 0.00286 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Ռաժդեն Սերյոժայի Գրիգորյանին օրինականացված ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. մարտի 03
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՐՏ 2021 թվականի N 83-Ա

### ԱԼՎԱՐԴ ԳԱՌՆԻԿԻ ԱՆԱՆՅԱՆԻՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Ալավերդու համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 03.03.2021թ. թիվ 02 արձանագրությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի համայնքի Աքորի գյուղի 3 փ., 1 փկղ., 6 տան բնակիչ Ալվարդ Գառնիկի Անանյանին նշանակել անչափահաս Արտյոմ Հայրապետի Ավետիքյանի /ծնված՝ 16.01.2004թ./ հոգաբարձու:
2. Ալվարդ Գառնիկի Անանյանին իրավունք վերապահել ստանալու և տնօրինելու անչափահասին հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերը՝ անչափահասին պահելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. մարտի 04
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՐՏ 2021 թվականի N 84-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 27.03.1997թ. նիստի թիվ 1 որոշումը, Արմեն Լեռնիկի Բեգջանյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 15122020-06-0043 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Արմեն Լեռնիկի Բեգջանյանին սեփականության իրավունքով պատկանող, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Շեստակովի փողոց 37 հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երիտասարդական փողոց, N 37/1 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. մարտի 04
ք. Ալավերդի

Հավելված 1

Ալավերդի համայնքի ղեկավարի «02»03,2021թ - թիվ 74 -Ն որոշման
Ալավերդի համայնքի 2021--թ. բյուջեի եկամտային(մուտքային) մասի բաշխումը ըստ եռամսյակների

(հազար դրամով)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդված ի NN | Ընդամենը 1-ին եռ | Ընդամենը կիսամյակ | Ընդամենը 9 ամիս | այդ թվում՝ տարի | վարչական մաս 1-ին եռ | վարչական մաս կիսամյակ | վարչական մաս 9 ամիս | այդ տարի | ֆոնդային մաս 1-ին եռ | ֆոնդային մաս կիսամյակ | ֆոնդային մաս 9 ամիս | այդ թվում՝ տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) | | 287198,5 | 566684,4 | 848099,7 | 1141330,8 | 204679,0 | 401645,4 | 600541,2 | 811252,8 | 82519,5 | 188429,0 | 290948,5 | 390378,0 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160) | 7100 | 23797,6 | 39921,9 | 58828,4 | 85970,8 | 23797,6 | 39921,9 | 58828,4 | 85970,8 | X | X | X | X |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից | 7131 | 5900,0 | 8872,8 | 15972,8 | 20017,0 | 5900,0 | 8872,8 | 15972,8 | 20017,0 | X | X | X | X |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | | 3900,0 | 4824,8 | 8724,8 | 10147,7 | 3900,0 | 4824,8 | 8724,8 | 10147,7 | X | X | X | X |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 2000,0 | 4048,0 | 7248,0 | 9869,3 | 2000,0 | 4048,0 | 7248,0 | 9869,3 | X | X | X | X |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 7136 | 10500,0 | 19000,0 | 26200,0 | 44249,7 | 10500,0 | 19000,0 | 26200,0 | 44249,7 | X | X | X | X |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 10500,0 | 19000,0 | 26500,0 | 44249,7 | 10500,0 | 19000,0 | 26200,0 | 44249,7 | X | X | X | X |
| 1130 | 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ | 7145 | 5947,6 | 8499,1 | 11105,6 | 13704,1 | 5947,6 | 8499,1 | 11105,6 | 13704,1 | X | X | X | X |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
| 1131 | Տեղական տուրքեր (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144+տող 1145+ տող 1146+տող 1147) | 71452 | 5947,6 | 8499,1 | 11105,6 | 13704,1 | 5947,6 | 8499,1 | 11105,6 | 13704,1 | X | X | X | X |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
| 1132 | ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող 1334), | | 100,0 | 200,0 | 350,0 | 500,0 | 100,0 | 200,0 | 350,0 | 500,0 | X | X | X | X |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | որից՝ | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | | | | |
| 1133 | աա) Հիմնական շինությունների համար | | 100,0 | 200,0 | 350,0 | 500,0 | 100,0 | 200,0 | 350,0 | 500,0 | X | X | X | X |
| 1134 | աբ) Ոչ հիմնական շինությունների համար | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1135 | բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող օբյեկտների) կառուցման | | 0,0 | 10,0 | 18,0 | 18,0 | 0,0 | 10,0 | 18,0 | 18,0 | X | X | X | X |
| 1136 | գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | | 5,0 | 10,0 | 15,0 | 20,0 | 5,0 | 10,0 | 15,0 | 20,0 | X | X | X | X |
| 1137 | դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | | 1869,8 | 3739,5 | 5609,3 | 7479,0 | 1869,8 | 3739,5 | 5609,3 | 7479,0 | X | X | X | X |
| 1138 | ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար | | 24,0 | 62,0 | 107,0 | 152,0 | 24,0 | 62,0 | 107,0 | 152,0 | X | X | X | X |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1139 | գ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության | | 2220,0 | 2220,0 | 2220,0 | 2220,0 | 2220,0 | 2220,0 | 2220,0 | 2220,0 | X | X | X | X |
| 1140 | ե) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության | | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | X | X | X | X |
| 1141 | ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1142 | թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | | 345,3 | 690,6 | 1035,8 | 1381,1 | 345,3 | 690,6 | 1035,8 | 1381,1 | X | X | X | X |
| 1143 | ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1144 | ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար | | 200,0 | 200,0 | 200,0 | 200,0 | 200,0 | 200,0 | 200,0 | 200,0 | X | X | X | X |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1145 | ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար | | 400,0 | 400,0 | 400,0 | 400,0 | 400,0 | 400,0 | 400,0 | 400,0 | X | X | X | X |
| 1146 | ժգ) Ավտոկայանատեղի համար | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1147 | ժդ) Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1148 | ժե) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար | | 183,5 | 367,0 | 550,5 | 734,0 | 183,5 | 367,0 | 550,5 | 734,0 | X | X | X | X |
| 1149 | ժզ) Հայաստանի Հանրապետության համայնքերի անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար | | 500,0 | 500,0 | 500,0 | 500,0 | 500,0 | 500,0 | 500,0 | 500,0 | X | X | X | X |
| 1150 | ժէ) այլ տեղական տուրքեր | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1150 | 1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | 7146 | 1450,0 | 3550,0 | 5550,0 | 8000,0 | 1450,0 | 3550,0 | 5550,0 | 8000,0 | X | X | X | X |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
| 1151 | Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր | | 1450,0 | 3550,0 | 5550,0 | 8000,0 | 1450,0 | 3550,0 | 5550,0 | 8000,0 | X | X | X | X |
| | (տող 1152 + տող 1153 ) | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
| 1152 | ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ փաստաթղթեր տալու համար | | 450,0 | 1050,0 | 1800,0 | 3000,0 | 450,0 | 1050,0 | 1800,0 | 3000,0 | X | X | X | X |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1153 | բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար | | 1000,0 | 2500,0 | 3750,0 | 5000,0 | 1000,0 | 2500,0 | 3750,0 | 5000,0 | X | X | X | X |
| 1160 | 1.5 Այլ հարկային եկամուտներ | 7161 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X |
| | (տող 1161 + տող 1165 ) | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում` | | | | | | | | | | | | | |
| 1161 | Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X |
| | (տող 1162 + տող 1163 + տող 1164) | | | | | | | | | | | | | |
| 1162 | ա) Եկամտահարկ | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1163 | բ) Շահութահարկ | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1164 | գ) Օրենքով պետական բյուջեին ամրագրվող այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումները` յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանվող չափերով | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1165 | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 7300 | 242857,2 | 485714,5 | 728571,8 | 971429,2 | 160337,7 | 320675,5 | 481013,3 | 641351,2 | 82519,5 | 165039,0 | 247558,5 | 330078,0 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| 1210 | 2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից | 7311 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| 1211 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1220 | 2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից | 7312 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| 1221 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X | | | | |
| 1230 | 2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից | 7321 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| 1231 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1240 | 2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից | 7322 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1241 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X | | | | |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից | 7331 | 160337,7 | 320675,5 | 481013,3 | 641351,2 | 160337,7 | 320675,5 | 481013,3 | 641351,2 | X | X | X | X |
| | (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258) | | | | | | | | | | | | | |
| | որից՝ | | | | | | | | | | | | | |
| 1251 | ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | 148825,2 | 297650,5 | 446475,8 | 595301,1 | 148825,2 | 297650,5 | 446475,8 | 595301,1 | X | X | X | X |
| 1254 | բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
| 1255 | բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1256 | բբ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X |
| 1257 | գ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 11512,5 | 23025,0 | 34537,5 | 46050,1 | 11512,5 | 23025,0 | 34537,5 | 46050,1 | X | X | X | X |
| 1258 | դ) Այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1260 | 2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից | 7332 | 82519,5 | 165039,0 | 247558,5 | 330078,0 | X | X | X | X | 82519,5 | 165039,0 | 247558,5 | 330078,0 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | (տող 1261 + տող 1262) | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում` | | | | | | | | | | | | | |
| 1261 | ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 82519,5 | 165039,0 | 247558,5 | 330078,0 | X | X | X | X | 82519,5 | 165039,0 | 247558,5 | 330078,0 |
| 1262 | բ) Այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X | | | | |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 7400 | 20543,7 | 41048,0 | 60699,5 | 83930,8 | 20543,7 | 41048,0 | 60699,5 | 83930,8 | 0,0 | 23390,0 | 43390,0 | 60300,0 |
| | (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380+ տող 1390) | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում` | | | | | | | | | | | | | |
| 1310 | 3.1 Տոկոսներ | 7411 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| | այդ թվում` | | | | | | | | | | | | | |
| 1311 | Բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարներ | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X | | | | |
| 1320 | 3.2 Շահաբաժիններ | 7412 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | X | X | X | X |
| | այդ թվում` | | | | | | | | | | | | | |
| 1321 | Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե մուտքագրվող շահաբաժիններ | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ | 7415 | 1200,0 | 2500,0 | 4300,0 | 6900,0 | 1200,0 | 2500,0 | 4300,0 | 6900,0 | X | X | X | X |
| | (տող 1331 + տող 1332 + տող 1333 + 1334) | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում` | | | | | | | | | | | | | |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ | | 900,0 | 1900,0 | 3000,0 | 4250,0 | 900,0 | 1900,0 | 3000,0 | 4250,0 | X | X | X | X |
| 1332 | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1333 | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | | | X | X | X | X |
